

Գաբրիէլ այնքա՛ն բարեսէր եւ այնքա՛ն մարդասէր էր, որ նկատելով իր անողոք հիւանդութեան յառաջացումը, պատուիրեց իր ազգականներուն՝ մեռնելէ վերջ այրել իր մարմինը, որպէս զի իր մանրէներով չթունաւորէ հողն ու օդը, եւ ուրիշներու վարակման պատճառ չդառնայ: Ասկէ աւելի լայն հայեացք ու զարգացած մտքի ապացոյց չէր կարելի սպասել գիտութեան մարդէ մը, որ արդէն ինքզինքը նուիրած էր հանրութեան շահերուն:

1892 յունվ. 6/18-ին վերջին շունչը փչեց Գաբրիէլ, խոբ սուգի մէջ թողլով իր ազգականներն ու թէ՛ մօտաւոր եւ թէ՛ հեռաւոր ծանօթները: Եւ որովհետեւ մեր եկեղեցին չընդունիր դիակիզութիւն, յուղարկաւորութիւնը կատարուած է քաղաքային եղանակով, եւ մարմինն այրուած է Պէր Լաշէզի դիակիզարանին մէջ: Դիակիզութենէն ետք՝ ասիւնն ամփոփուած է նոյն գերեզմանատունը գտնուող ընտանեկան դամբարանին մէջ:

• • •

Կրկին գալով երկասիրութեանս, ասոր նախնական վիճակն եղած է լրագրական պարզ յօդուած մը, յատկապէս պատրաստուած « Բազմավէպ » ի համար. բայց տեսնելով որ այս նպատակին համար խմբագրութեան դրկած « Գամբարան Լեւոնի եւ Լուսինեան » պատկերս թիւրիմացութեամբ մը եւ առանց անունիս յիշատակութեան հրատարակուեցաւ « Գեղունի » ի մէջ, այն օրէն հետամուտ եղայ ընդարձակել գրութիւնս եւ վաւերագրերու յաւելումով առանձին գիրք մը կազմել:

Անգլիերէն, արաբերէն, գերմաներէն, իտալերէն, հայերէն, լատիներէն, սպաներէն ու ֆրանսերէն բազմաթիւ ձեռնագրեր եւ տպագրեր զորս երկար քննութենէ անցուցի, միջոց տուին ինձ այս գիրքը կազմելու համար ձեռքիս տակ ունենալ իրար լրացնող այլազան վաւերագրերու խիստ հետաքրքրական եւ միանգամայն շահեկան դէպ մը: Այս վաւերագրերն ամբողջութեամբ դնել ուզած էի գրքիս վերջը, պատմութեանս ընթացքին մէջ տալով անոնց թարգմանութիւնը. բայց նկատելով որ արդէն բաւական երկար ժամանակ տեւեց ներկայ հրատարակութեանս տպագրութիւնը, եւ չուզելով ա՛լ աւելի ուշացնել գործիս երեւումը, ուրիշ հատորի մը վերապահեցի անոնց հրատարակումը, բաւականանալով միայն գրքիս մէջ դրուած թարգմանութիւններով, որոնցմէ լատիներէն վաւերագրերէ եղածները՝ գրեթէ ամբողջութեամբ՝ կը պարտիմ Գերապայծառ Կ. Յովհաննէս վ. Միսքէեանի, որուն շնորհակալութիւն կը յայտնեմ հոս: Նոյնպէս շնորհակալութիւն ճարտարապետ պ. Հրանտ Գազանձեանի, որ Լեւոնի գունաւոր դամբարանը Պարիսի Ազգ. Մատենադարանէն օրինակեց ազնուաբար, իմ մասնաւոր խնդրանքիս պատասխանելով: Շնորհակալութիւն նաեւ ողբացեալ Գաբրիէլ Էգնայեանի քեռորդիներուն, որոնք ամէն դիւրութիւն ընծայեցին ինձ գործին յաջողութեան համար: